

հարցեր բաց կը մնան եւ առարկայ մասնական քննութեան եւ վիճաբանութեան: Կը կարօտինք Օչականի անձնական միջամտութեան, հարցերու ամբողջական լուսարանութեան մը համար:

Ձունինք վերջին խօսք. չափազանց դասական պիտի ըլլար: Օչականի ի նպաստ եւ հակառակ կարծիքներ իմ մէջս անգամ դեռ իրարու դէմ կը կանգնին: Եւ այս երկուութիւնը կը յուսամ յաջողած ըլլալ ներկայացնել, առանց բացայայտ դիտումի, խորհրդածութիւններու ընթացքին:

Օչական հետաքրքրական է ամէն անգամ երբ ապրուած ներկայի գիտակցութիւնը կը դառնայ. անտանելի է սակայն եւ տանջող, երբ իր այլաբանութիւններով եւ փորձառական (experimental) գրականութեամբ եւ յառաջապահ լեզուով, կը ջանայ փոխանցել մեզի իր ներաշխարհը:

Ասկէ ետք, խօսքը վահէ Օչականին:

Հ. Ռ. ԱՓԱՅԷԼ ԱՆՏՈՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՇՐՈՒԱԾ ՔՆԱՐ

(ԵՂԵՐԵՐԳ ԴՈՒՐԵԱՆԻ)

ԵՐՐՈՐԴ ԵՂԱՆԱԿ

ՇՈՂԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾ

Ո՛վ իմ Աստուած շողերու
Նայէ՛ աչքիս աւազանին ամպամած,
Նայէ՛ հոգւոյս փթթումներուն երկիւղած.
Թող վերստին պայծառանամ ու խայտամ,
Եւ վերստին ծաղկի հոգիս, արփիանամ:

Ո՛վ իմ Աստուած շողերու
Փըշուր փըշուր տարրալուծուած եմ ահա,
Մարմինս առնէ թող մառախուղն անոպայ,
Բայց ես անհուն բոյրի, շողի կարօտով
Քեզի կու գամ, կը տրոփէ սիրտս անձուկով:

Բայց աչքս յանկարծ կ'ամպոտի
Ու չես երեւիր դուն, ո՛վ Աստուած շողերու,
Աստուած բարի, Աստուած դողդոջ սրտերու.
Քընարս ինչո՞ւ կը սարսըռայ ու կ'ողբայ,
Եւ հոգիս զերդ ծով մ'ալեկոծ կը գողայ:

Կը խարխափեմ ես արդէն,
Ու աչքերդու գիշերին մէջ, ա՛հ, կրկին
Այտերուս վարդը կը փնտռեմ լալադին,
Հանգած է հին բոցն ալ, որ թռիչք ինձ կու տար,
Հեւք մը խուզուտ կը չափէր սիրտս յամբարար:

Ո՛վ Աստուած իմ, Սէր անհուն,
Շանթեց որոտն ողբերգութեանս դալարուն,
Եւ ես մահուան երգիչ, մահուան որս թասուն,
Առած զէնքեր հըրատ՝ քեզի դէմ ելայ,
Ոչինչըս ես՝ ամբաւիդ դէմ կանգնեցայ:

Երկինքն ամպ էր, կը գոռար,
Աստղերը ինկած անդունդին մէջ՝ կ'այրէին,
Հրդեհ մը զիս բոցավառած մոլեգին՝
Իր կըլափին մէջ կը տանէր շատ հեռուն,
Ո՛չ շող կար, ո՛չ յոյս, այլ խաւար եւ սպառում:

ԱՆՀՈՒՆԻ ՏԵՆՉԱՆՔ

Սա նեղ բանտէն դէպի մահ
Թըռիչք կ'առնեմ մերկ, անզրահ.
Երկաթէ ցաւը կուրծքիս տակ զինուած է,
Ու անհունին դռնակն ուժգին կը ծեծէ:

Թօշնած է վարդը ձեռքիս,
Մահուան համբո՛յր, սեւ կսկիծ.
Հերոսական պայքարներու դափնիներ
Շուրջը ճակտիս լայն աղօսներ են բացեր:

Ինձ հեռուէն կը շողայ
Արշալոյսին աչքն հսկայ.
Նոր դարերու սեմը հիմա կը կոխեմ,
Ու կը կանգնիմ խորհուրդներուն դէմ առ դէմ:

Ես ճամբորդն եմ, առկայծ սիրտ,
Որ կը դայթէ անժըպիտ
Անհունութեան նայող խախուտ կամուրջէն,
Ուրկէ պիտի ողջունեմ այգն ոսկեղէն:

Ես փըշրըւած հրաբաժակ,
Եւ պարպըւած, այրած դանկ.
Մահուան տըխուր գիշերէս ետք, ո՛վ գիտէ,
Պիտի գրկե՞մ Երազի ափն արծաթէ:

Թափուր ու ցուրտ ձեռքերով,
Եւ տենչանքով, անսանձ հով,
Կ'երթամ ահա, անհունի մեծ սափորէն
Լեցնելու սիրտս հեղեղներու բոցերէն:

ԾԱՌԵՐԸ ԴԵՌ Կ'ԱՐՏԱՍՈՒՆ ՇԻՐՄԻՆ

Ծառերը դեռ կ'արտասուեն,
Ու սօսափին մը Թախծոտ, յուշ դարաւոր,
Կը փայփայէ սուգի անհուն տարափով
Մահուան դալուկ ըմպած ծառերն ալեւոր,
Որոնց վերեւ հոգիդ նստած է անխռով:

Ա՛հ, ինչ տենդով, ցաւէն տանջուած, կ'ուղէիր
Համագրկել սեւ մայրութիւնը փոսիդ,
Ուրտեղ վարդեր, սիրող սրտեր, աստղեր հիւր,
Զէին հեղներ ա՛լ դալկութիւնդ ու հոգիդ:

Գիշերներ այժմ, իրենց խաղաղ հովանին
Կը տարածեն աճիւնիդ վրայ տառապեալ.
Եւ դեռ կ'ապրի յիշատակիդ գոռ արծուին,
Որ կը սիրէր խորունկ երկինք խոյանալ:

Անմահութեան տենչանքն այրեց ճակատդ հէգ,
Ուր կար աշխարհ մը յոյզերով իր բեղուն.
Բայց գրկեցիր դուն լոկ խաւար, ամպ ու մէգ,
Թէեւ սրտիդ հրդեհն արեւ մ'էր անհուն:

Շիրմիդ քարերն ա՛լ չեն քրտնիր տառապանք.
Մահէն անդին, լոյսի դաւառն ողջունած,
Կ'երգես դու Սէրն, Երազն անվերջ ու խայտանք,
Փափկութեան գիւղին, ուր ցաւ չըկայ դարանած:

Եւ մահարձանդ իր սըլացիկ նրբութեամբ
Քառաթեւեան ու բրգածեւ կատարով,
Հանճարի ցոլքը կը սփռէ, ցոլք անամպ,
Որպէս ռատիոյ կայան, լեցուած լոկ քեզմով:

Տրտում անձրեւը կը լիզէ քարդ ճերմակ,
Բայց քու աւանդըդ հոն անջինջ կը մընայ,
Հայեացքն ուղղած միշտ դարերուն լուսածագ,
Կարօտանքիդ եւ սէրերուդ լուռ վըկայ:

Դուն ծանր, անխօս Սուգն ես միայն, ո՛վ քերթող,
Մահերու մահը գրկած, սէրդ, մայր շիրիմ,
Երազէ ետք, որուն երկու ծայրերն հող,
Զիրար փութով համբուրեցին Թախծագին:

Սիրտ մ'աճիւնիդ վրայ բարախեց ու անցաւ.
Զգացի՞ր դուն զայն, քերթող անմահ ու զգայուն,
Տերեւներն ալ շըշընչեցին հոն անձկաւ.
Բանաստեղծ մ'էր՝ որ լըսեց ձայնըդ տրտում:

ՎԷՐՔՍ ՎԱՐԴՆ Է ԱՆՀՈՒՆԻՆ

Անհունն ի՞նչ է,
Գրկումը մե՞ծ ունային
Թէ մուտք վրսեմ՝ ուկէանն
Անծայրածիր բարիին:
Անհունի շուրթն հսկայական վարդ մըն է
Սիրոյ պայծառ համբոյրին.
Եւ լըռութեան ձայնն ամէնէն դաշնաւոր
Երգը բոլոր երգերէն:
Թոյլ տըւէք, ա՛խ, լըսեմ ես
Կանչը սարսուռ հեռուներուն՝ որ կ'իշխեն
Ե՛ւ մտքերու ե՛ւ սրտերու համազարկ:
Հեռագոյն սէր, հեռագոյն յոյս եւ պատգամ
Որ աննրման արշալոյսով կը ծաղկի:

* * *

Ոչ ոք վէրքիս սեւ անդունդին մօտեցաւ.
Այդ վէրքն հիմա կարմիր վարդն է երկնքին,
Որ աստղերուն կը ժպտի:
Պիտի գրկեմ ես ահա
Նոր խանձարուրդ, նոր աշխարհ:
Հոս միայն վիշտ հծծեցի,
Սիրտըս մընաց դատարկ սիրոյ ցօղերէն:
Կ'երթամ մտնել պերճ ապարանքն անհունին,
Հոն գտնելու անձրեւն անոյշ շողերո՞ւ,
Անդորրութիւն, բերքը կանաչ հովիտին,
Եւ նոր արեւ մը յաւերժին լոկ նայող:

* * *

«Ես անհունն եմ» ու կը բախեմ տենդադին
Դուռն անդունդին լուսաւոր,
Ուր չըկայ ո՛չ ալեծրփանք, ո՛չ հըծծիւն...:

ՓՇՐՈՒԱԾ ՔՆԱՐ

Աչքերուս լոյս եւ սրտիս սէր, դու քընա՛ր,
Ոտքիս ներքեւ խորտակուած,
Իբրեւ թախիժ անհուններու տրտմալար,
Ինձ կը նայիս սըզաւոր:

Փըշուր փըշուր արտասուող լոյս կողերէդ
Կարմիր արցունք կը հոսի,
Սատափաշող ծոցէդ, աղբիւր լուսակերտ,
Արիւնի ծով կը կաթի:

Կը հեւայիր երբ լարերուդ դպչէի,
Պատմելու ցաւս աշխարհին.
Բեկորներդ այժմ նետուած տրտում մէկուսի,
Չունին ո՛չ սիրտ, ո՛չ պատգամ:

Մահուան դադադն ուսերուս վրայ կը ճնշէ,
Զիս կը դրկեն նոճիներ.
Շիրմաքարս ալ, լըռութեան մէջ հառաչ մ'է,
Առանց երգող քընարի:

Ի՛նչպէս լուծուած եւ մահահոտ ես սիրտ իմ,
Ո՞ւր է Դուրեանն անցեալի.
Ինչո՞ւ պայքարն այս անճանօթ եւ մտերիմ,
Ես իսկ ինձի թշնամի:

Ո՞ւր փախչիմ, ո՞ւր... դիս կը վանէ ժամանակն,
Անհունի ծոցը հսկայ.
Կընա՞մ հիւսել ես այնտեղ երգ, ամանակ,
Այս փըշըրւած քընարով:

Քընարին հետ սիրտս ալ սառած՝ կ'արտասուէ,
Վերջալոյս մ'եմ անժըպիտ.
Անդունդին եզրը հեւացող սարսուռ մ'է
Հողիս, մարած հըրարուխ:

Յընորք, պատրանք, թշուառութեան արձագանք,
Ինչ որ օրերս հիւսեցին.
Ես կը մեկնիմ, ետիս թողած աւերակ,
Եւ նիհար կեանք մ'անարեւ:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ